# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Հայրապետյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2023 թվականի դեկտեմբերի 3-6-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն (այսուհետ՝ Ռոսսելխոզնադզոր)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող բեռների հետ կապված Վերին Լարսի անցակետում խնդրահարույց հարցերի քննարկման համար Ռոսսելխոզնադզորի ղեկավար կազմի և աշխատակիցների հետ հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բուսասանիտարական վերահսկման բեռների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելու գործընթացում առաջացած խնդիրների վերաբերյալ հրատապ հարցը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Արմեն Հայրապետյանը հանդիպել է Ռոսսելխոզնադզորի ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ: Բուսասանիտարական վերահսկման բեռների ներմուծման խնդրի վերաբերյալ հարցից բացի քննարկվել է նաև Հայաստանի Հանրապետությունում կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների արտադրանքի մատակարարումները Ռուսաստանի Դաշնություն վերսկսելու հարցը:

Արմեն Հայրապետյանը նշել է, որ հետևողականորեն իրականացվում են վերահսկողական բոլոր համալիր միջոցառումները՝ կանխելու համար խախտումներով բեռների մատակարարումը Ռուսաստանի Դաշնություն: Նա երաշխավորել է արտահանվող ապրանքների բուսասանիտարական հավաստագրման առավել թափանցիկությունն ու հուսալիությունը՝ ապահովելու համար մատակարարվող արտադրանքի հետագծելիությունն ու անվտանգությունը: Սերգեյ Դանկվերտը վստահեցրել է, որ Ռոսսելխոզնադզորը միևնույն վերաբերմունքն է դրսևորում Ռուսաստանի Դաշնություն մուտք գործող ցանկացած բուսական արտադրանքի մշտադիտարկման ժամանակ և համարժեք միջոցներ է ձեռնարկում յուրաքանչյուր հայտնաբերված խախտման համար՝ անկախ ուղարկող երկրից:

Հայկական պատվիրակության անդամները հանդիպել են Ռոսսելխոզնադզորի ղեկավարի տեղակալ Յուլիա Շվաբաուսկենեի գլխավորած աշխատանքային խմբի անդամների հետ և քննարկել Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների հարցը: Ներկայացվել են հայկական ծագման գյուղմթերքների այն խնդիրները, որոնց պատճառով բեռները հետ են վերադարձվել: Ռուսական կողմն առաջարկել է հետ վերադարձված ապրանքների մասով իրականացնել պաշտոնական քննություն, պարզել խնդիրների պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք հետագայում կբացառեն Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքներում կարանտին օրգանիզմների առկայությունը:

Գործուղման ընթացքում Արմեն Հայրապետյանը հանդիպել է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կարգավորման գծով Կոլեգիայի անդամ (նախարար) Վիկտոր Նազարենկոյի հետ: Հանդիպման ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարն անդրադարձել է ԵԱՏՄ անդամ պետություններում վերահսկողական միասնական մոտեցումների կիրառման հնարավորությանը, մասնավորապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ բոլոր անդամ պետություններում միասնական մոտեցում ցուցաբերվի վերահսկվող բեռների նկատմամբ նշանակման վայր հասնելուց հետո, ինչպես դա իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում: Նազարենկոն պատասխանել է, որ ԵԱՏՄ-ի դեպքում վերահսկողությունն իրականացվում է անմիջապես սահմանի վրա և ոչ մի անդամ պետության համար բացառություն լինել չի կարող:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը կուժեղացնի Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների նկատմամբ հսկողությունը, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննությունների իրականացման միջոցով: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել բարելավել գերատեսչությունների միջև հաղորդակցությունը՝ ի հայտ եկած խնդիրները փորձագիտական մակարդակում հնարավորինս արագ լուծելու նպատակով, ինչպես նաև համատեղ վերահսկողական միջոցառումների մասին, որոնց ճշգրիտ ժամկետները կհստակեցվեն աշխատանքային կարգով:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 11 դեկտեմբերի 2023թ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Վահագն Հարությունյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2023 թվականի դեկտեմբերի 4-6-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն (այսուհետ՝ Ռոսսելխոզնադզոր)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող բեռների հետ կապված Վերին Լարսի անցակետում խնդրահարույց հարցերի քննարկման համար Ռոսսելխոզնադզորի ղեկավար կազմի և աշխատակիցների հետ հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բուսասանիտարական վերահսկման բեռների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելու գործընթացում առաջացած խնդիրների վերաբերյալ հրատապ հարցը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Արմեն Հայրապետյանը և ղեկավարի տեղակալ Վահագն Հարությունյանը հանդիպել են Ռոսսելխոզնադզորի ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ: Բուսասանիտարական վերահսկման բեռների ներմուծման խնդրի վերաբերյալ հարցից բացի քննարկվել է նաև Հայաստանի Հանրապետությունում կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների արտադրանքի մատակարարումները Ռուսաստանի Դաշնություն վերսկսելու հարցը:

   Նշվել է, որ հետևողականորեն իրականացվում են վերահսկողական բոլոր համալիր միջոցառումները՝ կանխելու համար խախտումներով բեռների մատակարարումը

Ռուսաստանի Դաշնություն: Երաշխավորվել է արտահանվող ապրանքների բուսասանիտարական հավաստագրման առավել թափանցիկությունն ու հուսալիությունը՝ ապահովելու համար մատակարարվող արտադրանքի հետագծելիությունն ու անվտանգությունը: Սերգեյ Դանկվերտը վստահեցրել է, որ Ռոսսելխոզնադզորը միևնույն վերաբերմունքն է դրսևորում Ռուսաստանի Դաշնություն մուտք գործող ցանկացած բուսական արտադրանքի մշտադիտարկման ժամանակ և համարժեք միջոցներ է ձեռնարկում յուրաքանչյուր հայտնաբերված խախտման համար՝ անկախ ուղարկող երկրից:

Ռոսսելխոզնադզորի աշխատանքային խմբի անդամների հետ քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների հարցը: Ներկայացվել են հայկական ծագման գյուղմթերքների այն խնդիրները, որոնց պատճառով բեռները հետ են վերադարձվել: Ռուսական կողմն առաջարկել է հետ վերադարձված ապրանքների մասով իրականացնել պաշտոնական քննություն, պարզել խնդիրների պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք հետագայում կբացառեն Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքներում կարանտին օրգանիզմների առկայությունը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը կուժեղացնի Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների նկատմամբ հսկողությունը, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննությունների իրականացման միջոցով: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել բարելավել գերատեսչությունների միջև հաղորդակցությունը՝ ի հայտ եկած խնդիրները փորձագիտական մակարդակում հնարավորինս արագ լուծելու նպատակով, ինչպես նաև համատեղ վերահսկողական միջոցառումների մասին, որոնց ճշգրիտ ժամկետները կհստակեցվեն աշխատանքային կարգով:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.** 11 դեկտեմբերի 2023թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Արթուր Նիկոյան

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բուսասանիտարիայի վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2023 թվականի դեկտեմբերի 3-5-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն (այսուհետ՝ Ռոսսելխոզնադզոր)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող բեռների հետ կապված Վերին Լարսի անցակետում խնդրահարույց հարցերի քննարկման համար Ռոսսելխոզնադզորի ղեկավար կազմի և աշխատակիցների հետ հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

Քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բուսասանիտարական վերահսկման բեռների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելու գործընթացում առաջացած խնդիրների վերաբերյալ հրատապ հարցը

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել Ռոսսելխոզնադզորի ղեկավարի տեղակալի, բուսասանիտարիայի վարչության պետի և իր տեղակալի հետ: Քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների հարցը: Ներկայացվել են հայկական ծագման գյուղմթերքների այն խնդիրները, որոնց պատճառով բեռները հետ են վերադարձվել: Ռուսական կողմն առաջարկել է հետ վերադարձված ապրանքների մասով իրականացնել պաշտոնական քննություն, պարզել խնդիրների պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք հետագայում կբացառեն Հայաստանի Հանրապետությունից

Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքներում կարանտին օրգանիզմների առկայությունը

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը կուժեղացնի Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների նկատմամբ հսկողությունը, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննությունների իրականացման միջոցով: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել բարելավել գերատեսչությունների միջև հաղորդակցությունը՝ ի հայտ եկած խնդիրները փորձագիտական մակարդակում հնարավորինս արագ լուծելու նպատակով

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քննարկման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը հնարավորություն կստեղծի Հայաստանից դեպի ՌԴ գյուղմթերքներ անխափան արտահանելու համար:

11 դեկտեմբերի 2023թ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արթուր Մամիկոնյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի սահմանային պետական վերահսկողության համակարգման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2023 թվականի դեկտեմբերի 3-5-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն (այսուհետ՝ Ռոսսելխոզնադզոր)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող բեռների հետ կապված Վերին Լարսի անցակետում խնդրահարույց հարցերի քննարկման համար Ռոսսելխոզնադզորի ղեկավար կազմի և աշխատակիցների հետ հանդիպմանը մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բուսասանիտարական վերահսկման բեռների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելու գործընթացում առաջացած խնդիրների վերաբերյալ հրատապ հարցը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել Ռոսսելխոզնադզորի ղեկավարի տեղակալի, բուսասանիտարիայի վարչության պետի և իր տեղակալի, ինչպես նաև անասնաբուժության բնագավառում վերահսկողությունը համակարգող պաշտոնատար անձանց հետ: Քննարկվել է Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների հարցը: Ներկայացվել են հայկական ծագման գյուղմթերքների այն խնդիրները, որոնց պատճառով բեռները հետ են վերադարձվել: Ռուսական կողմն առաջարկել է հետ վերադարձված ապրանքների

մասով իրականացնել պաշտոնական քննություն, պարզել խնդիրների պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ խնդիրները լուծելու համար:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը կուժեղացնի Ռուսաստանի Դաշնություն արտահանվող գյուղմթերքների նկատմամբ հսկողությունը, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննությունների իրականացման միջոցով: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել բարելավել գերատեսչությունների միջև հաղորդակցությունը՝ ի հայտ եկած խնդիրները փորձագիտական մակարդակում հնարավորինս արագ լուծելու նպատակով

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քննարկման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը հնարավորություն կստեղծի Հայաստանից դեպի ՌԴ գյուղմթերքներ անխափան արտահանելու համար:

11 դեկտեմբերի 2023թ